

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ. նոյեմբերի 27-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 36-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը, հաշվի առնելով, որ օրակարգում ընդգրկված է դեկանի տարեկան հաշվետվության հարցը, իսկ համաձայն՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կանոնադրության 26-րդ կետի համաձայն՝ դեկանը չի կարող լինել դեկանի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերի նախագահողը, և որ այդ նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանն առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածուներ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեց պրոֆ. Վ.Հովհաննիսյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև ախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ս.Ղազինյանի տարեկան հաշվետվությունը:
2. 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
3. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. 15T-5E236 «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմային իրականացման ամփոփոխ հաշվետվության ընդունում:

1. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ս.Ղազինյանի տարեկան հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռեկտոր Ա.Սիմոնյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ա.Թաթոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. **ԼՍԵՑԻՆ.** 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:

Ամբիոնների վարիչները տեղեկացրին, որ ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոններում: Ամբիոնների վարիչներն անդրադարձան թե ամբիոններին և թե ամբիոնների առանձին դասախոսներին տրված գնահատականներին՝ հավելելով, որ դրանք համեմատվել են նախորդ տարիների արդյունքների հետ և դրա հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

3.1 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ասպիրանտ Տաթևիկ Նահապետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևիկ Նահապետյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 43 կրեդիտ, ներառյալ՝ 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 36 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.2 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Նանե Ղազարյանի ատեստավորման մասին:

Նանե Ղազարյանը նոյեմբերի 11-ին ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Նանե Ղազարյանը ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը առաջին տարվա հեռակա ասպիրանտ Իսկուհի Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսկուհի Հովհաննիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 18 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից և գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.4 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անահիտ Անտոնյանի ատեստավորման մասին:

Անահիտ Անտոնյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտներ ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից,

պրակտիկայից, պատրաստել է թեկնածուական ատենախոսության մոտ 70 տոկոսը, պատրաստվում է հանձնել մասնագիտական որակավորման քննությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Անահիտ Անտոնյանը ավարտում է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

3.5 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անի Միքայելյանի ատեստավորման մասին:

Անի Միքայելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել կրեդիտներ ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, պրակտիկայից, պատրաստել է թեկնածուական ատենախոսության մոտ 70 տոկոսը, պատրաստվում է հանձնել մասնագիտական որակավորման քննությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Անի Միքայելյանը ավարտում է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

3.6 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Հրաչուհի Սարգսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Հրաչուհի Սարգսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել պահանջվող կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.7 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ Էմմա Բեկթաշյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Էմմա Բեկթաշյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 13 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից և գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.8 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ Տաթևիկ Սարուխանյանի ատեստավորման

մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Տաթևիկ Սարուխանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 13 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից և գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.9 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Նարինե Մանասյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Նարինե Մանասյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 18 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից և գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.9 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Կարեն Ամիրյանի ատեստավորման մասին:

Կարեն Ամիրյանը հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները և 2017 թվականի դեկտեմբերի 19-ին ԲՈՀ-ի՝ Իրավագիտության 001 մասնագիտական խորհրդում պաշտպանելու է իր թեկնածուական ատենախոսությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3.10 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Վարդանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 74 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 40 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.11 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Արամ Ղահրամանյանի ատեստավորման մասին:

Արամ Ղահրամանյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Արամ Ղահրամանյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.12 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Հայկուհի Սեդրակյանի ատեստավորման մասին:

Հայկուհի Սեդրակյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Հայկուհի Սեդրակյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.13 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Միքայել Խչեյանի ատեստավորման մասին:

Միքայել Խչեյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Միքայել Խչեյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.14 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Մուրաֆյանի ատեստավորման մասին:

Անի Մուրաֆյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Անի Մուրաֆյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.15 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Ռուբինա Պետրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուբինա Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 115 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 78 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.16 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Նարինե Ավագյանի ատեստավորման մասին:

Նարինե Ավագյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Նարինե Ավագյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.17 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Շուշանիկ Ղուկասանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շուշանիկ Ղուկասյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 167 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 15 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 122 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.18 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիամ Այվագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Այվագյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 96 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 60 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.19 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիամ Հովսեփյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Հովսեփյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 70 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 31 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.20 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Նանե Սահակյանի ատեստավորման մասին:

Նանե Սահակյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Նանե Սահակյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.21 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Գաբուզյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քրիստինե Գաբուզյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 59 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 35 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.22 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Սաղոյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվա Սաղոյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 59 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 35 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.23 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Կարինե Պետրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Գ.Մերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարինե Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.24 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Նունե Հայրապետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նունե Հայրապետյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 99 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 60 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.25 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Նինա Փիրումյանի ատեստավորման մասին:

Նինա Փիրումյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Նինա Փիրումյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.26 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Եղիգարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիանա Եղիգարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 99 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 60 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.27 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Սրբուհի Գալյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սրբուհի Գալյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 132 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 80 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.28 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Քրիստինա Խաչատրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քրիստինա Խաչատրյանը հաշվետու ժամանակաշրջանում 15 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, ինչպես նաև անհրաժեշտ կրեդիտներ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.29 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Կարեն Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Հովհաննիսյանը հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, թեկնածուական ատենախոսությունը գրեթե պատրաստ է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.30 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Դանիելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Դանիելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 132 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի

ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 12 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 90 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.31 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Էմմա Ավագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էմմա Ավագյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 111 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 70 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.32 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը հեռակա ասպիրանտ Անի Բադալյանի ատեստավորման մասին:

Անի Բադալյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արձանագրել, որ Անի Բադալյանն ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը:

3.33 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Ռոմել Մանուկյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռոմել Մանուկյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 35 կրեդիտ, ներառյալ՝ 13 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.34 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Նազելի Թովմասյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նազելի Թովմասյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ, ներառյալ՝ 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 5 կրեդիտ պրակտիկայից, 42 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4. ԼՍԵՑԻՆ. 15T-5E236 «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմային իրականացման ամփոփոչ հաշվետվության ընդունում:

Երևանի Պետական Համալսարանում իրականացված «15T-5E236» ծածկագրով գիտական թեմայի ղեկավար, պրոֆ. Գ.Ղազինյանը ներկաներին տեղեկացրեց, որ 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N 10-3/15T-37 պայմանագրի համաձայն հաշվետու ժամանակահատվածում՝ 11.12.2015-10.12.2017թթ. կատարողների՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյանի և նույն ամբիոնի ասիստենտ Տ.Սուջյանի հետ միասին թեմայի իրականացման նպատակով ուսումնասիրվել և վերլուծվել են դատական ակտերի վճռաբեկ վերանայման ինստիտուտի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան բազմաթիվ աղբյուրներ, ուսումնասիրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) պրակտիկ գործունեությունը: Տեսական և գործնական հիմնախնդիրների, մասնավորապես պրակտիկ իրավաբանների և տեսաբանների շրջանում լայնորեն քննարկվող և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ սահմանադրությամբ նորովի օրենսդրական կարգավորում ստացած՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի վերլուծության արդյունքների հիման վրա գիտական հոդվածների շրջանակներում եզրահանգումներ են արվել ճյուղային օրենսդրության մեջ այդ նոր կարգավիճակի ինկորպորացմանն ուղղված անհրաժեշտ կարգավորումների վերաբերյալ:

Տեսական և գործնական համապատասխան եզրահանգումների լույսի ներքո առաջին անգամ գիտական մակարդակով վերլուծվել են նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի համապատասխան կարգավորումները: Հոդվածի շրջանակներում մանրամասն վերլուծության են ենթարկվել վճռաբեկ վերանայման՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի իրավական էությունը, դրա արջև դրված խնդիրները: Մասնավորապես, հանգամանորեն վերլուծվել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի շրջանակներում վճռաբեկ դատարանի կողմից դատական իրավաստեղծագործություն իրականացնելու, վճռաբեկ դատարանի որոշումների նախադեպային նշանակության խնդիրը, որի արդիականության մասին է վկայում դրան ՀՀ նոր դատական օրենսգրքի նախագծի հայեցակարգի շրջանակներում կատարված անդրադարձը: Արդյունքում գիտական եզրահանգումներ են արվել արդյունքում դատական վերանայման համակարգում ՀՀ վճռաբեկ դատարանի տեղի և դերի մասին՝ անդրադառնալով նաև դատական վերանայման ներպետական օրենսդրությամբ և Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքի համակողմանի երաշխավորմանն ուղղված դատական վերանայման մոդելի ձևավորման խնդրին:

Հաշվետու ժամանակահատվածում քննարկման և վերլուծության առարկա են դարձվել տեսական և գործնական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսին վճռաբեկ բողոքարկման առարկան և ժամկետները, վճռաբեկ բողոքի նախնական քննության դատավարական ընթացակարգերը: Տեսական աղբյուրների և վճռաբեկ դատարանի պրակտիկ գործունեության ուսումնասիրության արդյունքում գիտական հոդվածների շրջանակներում, մասնավորապես, վեր են հանվել վճռաբեկ բողոքարկման առարկայի և ժամկետների, վճռաբեկ բողոքի նախնական քննության դատավարական ընթացակարգերի առանձին օրենսդրական կարգավորումների հետ կապված տեսական հիմնախնդիրները, նշված կարգավորումների առնչությամբ գործնականում առաջացող խնդիրները և առաջարկվել են դրանց լուծման հնարավոր ուղիները: Առանձին քննարկման առարկա են դարձվել վճռաբեկ բողոք ձևին և բովանդակությանը ներկայացվող որոշ պահանջերի հետ կապված գործնական խնդիրները:

Առանձնահատուկ ուսումնասիրության առարկա են դարձվել անգլոսաքսոնական և ռոմանագերմանական իրավական համակարգերի դատական վերանայման մոդելները, արտասահմանյան երկրների բարձրագույն դատական ատյանների պրակտիկ փորձը, ըստ այդմ եզրահանգումներ են արվել դատական ակտերի վերանայման տարբեր ձևերի, այդ թվում՝ երկրի հիմնական օրենքի մակարդակով, գործառությանը դերի կարգավորման իրավաչափության վերաբերյալ:

Քննարկվել են նաև դատական ակտերի վճռաբեկ վերանայման արդյունքում դրանց բեկանման և փոփոխման հիմքերի օրենսդրական կարգավորման հետ կապված դատավարական հիմնախնդիրները և վճռաբեկ դատարանի լիազորությունները: Ըստ այդմ, համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկներ են ներկայացվել:

Վերոհիշյալ խնդիրները գիտական քննարկման առարկա են դարձվել 2015 թվականի ասպիրանտների և հայցորդների, 2016 թվականի ասպիրանտների և հայցորդների, ինչպես նաև նույն թվականի դասախոսների գիտական նստաշրջանների ժամանակ: Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ գործնական հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերի վերաբերյալ գիտական զեկուցումներ են ներկայացվել նաև 2016 թվականի փետրվարի 27-28-ը և մարտի 19-20-ը ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորների մասնկացությամբ Դիլիջանում կայացած կայացված կլոր-սեղան քննարկումների ժամանակ: Ուսումնասիրության առարկա դարձված առանձին գիտական խնդիրներ քննարկվելու են 2017 թվականի դասախոսների գիտական նստաշրջանի ժամանակ:

Ընդհանուր առմամբ տպագրվել է 8 գիտական հոդված, թեմային ղեկավարը և կատարողները հանդես են եկել 5 գիտական զեկուցումներով: Տպագրության է ուղարկվել է թեմայի իրականացման հիմնական արդյունքներն ամրագրող՝ «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ընդունել 15T-5E236 «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմային իրականացման ամփոփոխ հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջան

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼԵՏԻ ԴԵԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2016-2017 ուս. տարվա

Դեռևս 2014 թ.-ին ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի կողմից նախանշվեցին ֆակուլտետի զարգացման 11 հիմնական ուղղություններ, որոնք պետք է կոչված լինեին մեկ կարևորագույն խնդիր լուծելու. Իրավագիտության ֆակուլտետը դարձնել ՀՀ և միջազգային աշխատաշուկայի պահանջներին բավարարող որակյալ կադրեր պատրաստող, միջազգային հարթակում կրթական և գիտական ճանաչում ունեցող գիտակրթական օջախ:

Ձևակերպված խնդիրը գուցե շատերին տարօրինակ թվա, քանի որ մեր ֆակուլտետը ՀՀ-ում այսօր էլ ճանաչված է որպես իրավագիտության ոլորտում գոնե բազային՝ բակալավրիատի մակարդակում լավագույն կրթություն ապահովող ուսումնական հաստատություն: Սակայն, արդեն 2016-2017 ուսումնական տարվանից նկատվող, նաև օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, բակալավրիատի դիմորդների քանակի նվազման միտումը, մեր բակալավրիատի որոշ լավագույն շրջանավարտների՝ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումը շարունակելու փոխարեն՝ արտերկրի ԲՈՒՀ-եր կամ ՀՀ-ում Ամերիկյան համալսարան դիմելը, մինչդեռ՝ արտերկրի ուսանողների կողմից մեզ մոտ կրթություն ստանալու ավելի ցածր հետաքրքրվածությունը, վկայում է մեր աշխատանքի իրականացման գործընթացում փոփոխություններ կատարելու, Իրավագիտության ֆակուլտետում ուսուցման որակի բարձրացման, ուսանողական կյանքը հագեցած ու հետաքրքիր դարձնելու միջոցով դիմորդների համար ֆակուլտետը գրավիչ դարձնելու անհրաժեշտության մասին:

Բնականաբար, ամենակարևոր ու առաջնային խնդիրը պետք է լինի ***թեկուզ քիչ, բայց որակյալ կադրերի*** պատրաստումը:

Այս ուղղությամբ տարիներ շարունակ, և առավել ընդգծված՝ վերջին տարիների ընթացքում, մի շարք քայլեր արդեն իսկ իրականացվել են՝ վերանայվել են կրթական, դասընթացների ծրագրերը, փոփոխվել է դասավանդման մեթոդիկան, պատրաստվել է ուսումնական գրականություն և այլն:

Իհարկե, որակյալ կադրերի պատրաստման ուղղությամբ իրականացվող կարևորագույն քայլը պետք է լինի իրավագիտության ֆակուլտետ որակյալ

ուսանողների ընդունման մեխանիզմների կատարելագործումը, ինչը, ցավոք, դեռ հեռու է ցանկալի վիճակից:

Քիչ, բայց որակյալ կադրերի ապահովման գործընթացը ենթադրում է նաև անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողներից ազատվելու մեխանիզմների կատարելագործում: Մինչ 2017թ.-ը ՀՀ ԿԳՆ-ի կողմից վարվող քաղաքականության արդյունքում վերջինս գրեթե անհնարին էր: Արդյունքում՝ աշխատաշուկայում նրանց հայտնվելը խիստ բացասաբար է ազդում ԵՊՀ-ի և ֆակուլտետի վարկանիշի վրա՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իհարկե, վաղ է խոսել այս ոլորտում առկա խնդիրը հաղթահարելու մասին, սակայն, այդ իմաստով, առաջին արդյունքներն արդեն իսկ հուսադրող են. 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանից և լուծարքներից հետո ԵՊՀ որդեգրած ճիշտ քաղաքականության արդյունքում իրավիճակը կտրուկ փոխվեց: Իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման համակարգից 19, հեռակա ուսուցման համակարգից՝ 53, այսինքն՝ միասին վերցված՝ անբավարար առաջադիմությամբ 72 ուսանողներ հեռացվեցին ֆակուլտետից, ինչը համոզված ենք, իր ազդեցությունը կունենա ուսման նկատմամբ ուսանողների վերաբերմունքի վրա:

Իհարկե, ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստման կարևոր նախադրյալը ուսանողների կրթություն ստանալու գործընթացի ճիշտ կազմակերպումն է, նրանց մոտ՝ ուսում ստանալու մոտիվացիայի բարձրացումը:

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում կրթական գործընթացի կազմակերպումը՝ ժամանակային տևողության, ուղղվածության, առարկայացանկի ընտրության տեսանկյունից, հիմնականում կանոնակարգված է, թեև ընթացիկ առանձին փոփոխություններ տեղի են ունենում (օրինակ՝ 2016-2017 թթ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից բակալավրիատում ներմուծվել է Իրավաբանական տեխնիկա գործնական ուղղվածության դասընթացը՝ պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրները դասընթացի փոխարեն): Սակայն ժամանակի հրամայականն է, որ հնարավորինս թեթևացվի ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ուսանողների լսարանային ծանրաբեռնվածությունը՝ շեշտը դնելով նրանց ինքնակրթության, այդ գործընթացն հաջող իրագործելու համար՝ դասախոսական կազմի կողմից

ուղղորդման ու աջակցություն ստանալու վրա: Ընդ որում լսարանային ժամերի թեթևացումը պետք է կատարվի ոչ միայն և ոչ այնքան մասնագիտական, այլ ընդհանուր հանրակրթական առարկաների հաշվին, որոնց՝ ուսանողի իմացության մակարդակը արդեն իսկ գնահատվել է ԲՈՒՀ ընդունվելիս: Այս խնդրի մասին մենք խոսում ենք ոչ առաջին անգամ և կործում ենք, որ այն պետք է լուրջ քննարկման առարկա դառնա իրավասու մարմինների կողմից (ԵՊՀ, ԿԳՆ):

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում կրթական գործընթացի բարելավմանը, դրա ծրագրերի՝ ուսանողների համար գրավչության բարձրացմանն ուղղված առանցքային քայլը՝ 2017-2018 ուսումնական տարվանից կյանքի կոչված նորարարությունն էր՝ մագիստրատուրայում ուսուցման ժամկետը կրճատել մինչև 3 կիսամյակ, որից էլ 3-րդ կիսամյակը՝ նախատեսելով պրակտիկայի և թեզի պաշտպանության համար: Պետք է նշել, որ այս նորամուծությունն իր արդյունքը տվեց, դեռ գոնե դիմողների ակտիվության առումով: Լուրջ մրցույթի արդյունքում այդ թվում նաև այլ բուհերից: Համալրվեցին ոչ միայն նախորդ տարիներից գործող մագիստրոսական ծրագրերը, այլև ուսանողների շրջանում առկա պահանջարկի հիման վրա, ներդրվեց նոր մագիստրոսական ծրագիր՝ «Պետության և իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» (այս ծրագրի դասընթացների շրջանակում փորձում ենք կյանքի կոչել նախկինում մեր ծրագրերից մեկը՝ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներով դասընթացների անցկացումը):

Վստահաբար, դրական փոփոխություններ պետք է ակնկալել նաև բովանդակային առումով՝ հաշվի առնելով այն, որ վերանայվել են դասավանդվող առարկաները, թողնվել են նրանք, որոնք առավելապես ուղղված են մագիստրոսական համապատասխան մասնագիտացմամբ անհրաժեշտ գիտելիքների տրամադրմանը, հմտությունների ձևավորմանը:

Ընդհանրապես, մագիստրատուրայի ծրագրերի վերանայումը, որակյալ, արդի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կադրերի պատրաստման կարևորագույն նախադրյալն է: Եթե բակալավրիատը պատրաստում է ընդհանուր պրոֆիլի իրավաբան, ապա, ակնկալվում է, որ մագիստրատուրայում պետք է անցում կատարվի մեկ այլ մակարդակի՝ ապահովելով կամ ուսանողների նեղ մասնագիտացումը առանձին ոլորտներում (ինչպես տեսական գիտելիքների տրամադրմամբ, այնպես էլ դրանք գործադրելու հմտությունների ձևավորմամբ), կամ

խթանելով նրանց հետազոտական նախասիրությունների զարգացումը: Այսօր Իրավագիտության ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերի մեծ մասը ձևավորվել են ըստ իրավունքի ճյուղերի ուղղվածության՝ քրեական իրավունք և դատավարություն, քաղաքացիական իրավունք և դատավարություն, պետության և իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք, սակայն համոզված ենք ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի ոլորտային կրթական ծրագրերի մշակմանը: Դրա օրինակներ ևս ֆակուլտետում կան՝ գործարարական իրավունք, կրիմինալոգիա. այս ծրագրերի առավելությունն այն է, որ կոնկրետ ոլորտում պահանջվող մասնագետի պատրաստման գործընթացում ներգրավվում են ոչ միայն իրավաբաններ, այլ բոլոր այն մասնագիտությունների ներկայացուցիչները, ում գիտելիքներն ու հմտությունները անհրաժեշտ են ծրագրի նպատակին համապատասխան՝ որակյալ կադր պատրաստելու համար: Օրինակ՝ «Կրիմինալոգիա» միջառարկայական մագիստրոսական ծրագրի շրջանակներում, որին իրավունք ունեն մասնակցելու իրավաբանները, հոգեբանները և սոցիոլոգները, դասավանդման գործընթացին ներգրավվում են սոցիալական աշխատողները, սոցիոլոգները, հոգեբանները, «Գործարարական իրավունք» ծրագրի պարագայում՝ տնտեսագետները: Թերևս սա այն ուղղությունն է, որին աստիճանաբար պետք է անցում կատարենք:

Մագիստրատուրայում հասունացել է նաև մեկ այլ՝ հետազոտական ուղղվածության ծրագիր ներդնելու անհրաժեշտությունը, որը թույլ կտա Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների մոտ ձևավորել անհրաժեշտ կարողություններ՝ հետագա գիտական գործունեության ծավալման համար:

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև Իրավագիտության ֆակուլտետի թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերի վերանայմանը. պետք է նշել, որ մեր ֆակուլտետում դա անընդհատ, շարունակական գործընթաց է, ծրագրերը անընդհատ թարմացվում են՝ առաջին հերթին՝ օրենսդրական ոլորտում տեղ գտնող փոփոխություններին և պրակտիկայի պահանջներին դրանց համապատասխանությունը ապահովելու նպատակով: 2016-2017 ուս.տարում, մագիստրատուրայի բոլոր առարկայական ծրագրերի վերանայում իրականացվել է նաև ԵՊՀ-ի Որակի ապահովման կենտրոնի

կողմից իրականացվող նախաձեռնության շրջանակներում, իսկ բակալավրիատում այդ գործընթացը տեղի է ունենում այս պահին:

Կրթության որակի բարձրացման գործում առանձին կարևորություն ունի **դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև քննական գործընթացի կատարելագործմանն** ուղղված գործունեությունը. 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դասախոսները մասնակցել են Երևանում, ինչպես նաև արտերկրում Եվրոպայի խորհրդի, GIZ կազմակերպության կողմից կազմակերպված նման 6 միջոցառման, ինչպես նաև՝ 2016 թ.-ի սեպտեմբերի 21-23-ը Թբիլիսիում անցկացված «Իրավաբանական ակադեմիական կրթության համատեղումը պրակտիկ գործունեության հետ» տարածաշրջանային կլոր սեղանի աշխատանքներին:

Այս ոլորտում առաջիկայում լուրջ համագործակցություն է նախատեսվում Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) կազմակերպության հետ՝ գերմանացի գործընկերների հետ համատեղ մեթոդական ուղեցույցի պատրաստում, վերապատրաստումներ, գերմանացի փորձագետի տեղակայում ֆակուլտետում՝ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին, և հատկապես երիտասարդ դասախոսներին դասավանդման մեթոդներին խորությամբ իրազեկելու, միջազգային դատախազերին մասնակցելու հավակնություն ունեցող ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ուսուցանելու նպատակով:

Դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև քննական գործընթացի կատարելագործմանն աջակցելու առումով այս կազմակերպության հետ արդեն իսկ հաջող համագործակցության փորձ ունենք. 2016-2017 ուս. տարում GIZ աջակցությամբ տպագրվել և ուսանողների շրջանում անհատույց տարածվել է «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք (լուծումներով)» ուսումնական ձեռնարկը (համահեղինակներ՝ Մայնի Ֆրանկֆուրտի, Բրեմենի համալսարանի պրոֆեսոր Ռոլֆ Քնիպեր, ի.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Ավետիսյան, ի.գ.թ., դոցենտ Գ. Բեքմեյան, ի.գ.թ. Արսեն Թավադյան): GIZ կազմակերպության հետ արդեն իսկ ձեռք է բերվել համաձայնություն՝ գերմանացի փորձագետի ներգրավմամբ անցկացնել վերապատրաստման դասընթաց, որի շրջանակներում, նշված ձեռնարկի օրինակով, կներկայացվեն իրավական խնդիրների մշակման, լուծման և գնահատման

մեթոդաբանությունը, ինչպես նաև աջակցություն կցուցաբերվի սահմանադրական/վարչական իրավունքի ոլորտներում խնդրագրքերի կազմմանը: Կարծում ենք, խնդրագրքում տեղ գտած խնդիրների լուծումների և դրանց նոր մեթոդաբանությունը կարելի է օգտագործել նաև մյուս ոլորտներում:

«Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք (լուծումներով)» ուսումնական ձեռնարկի մշակումը թույլ տվեց Քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից իրականացնել կարևոր մեկ այլ նախաձեռնություն՝ ընթացիկ ստուգումների ընթացքում, գրավոր քննությունն ավարտվելուց հետո, ուսանողներին ***էլեկտրոնային կարգով ուղարկել խնդիրների օրինակների լուծումները***, ինչը հնարավորություն տվեց ուսանողներին պատկերացում կազմել իրենց կողմից խնդրի լուծման ամբողջականության, թույլ տրված բացթողումների, սխալների մասին: Դրանով լուծվեցին մի քանի հարցեր. ապահովվեց քննական գործընթացի կանխատեսելիությունը, աշխատանքները ստուգող դասախոսների կողմից՝ միասնական մոտեցում դրսևորելը, նվազագույնի հասցվեցին բողոքարկումները: Առաջիկայում պլանավորում ենք այս փորձը կիրառել նաև մյուս քննությունների անցկացման ժամանակ:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրմանն, ինչպես նաև գիտելիքների ստուգման և գնահատման մեխանիզմների կատարելագործմանն էր ուղղված մեկ այլ կարևոր նախաձեռնություն. բակալավրիատի երկու մասնագիտացումներով ***ավարտական քննությունների անցկացումը*** գործ-խնդիրների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս գնահատել, թե որքանով են մեր շրջանավարտները պատրաստ պրակտիկ ոլորտում ինքնուրույն գործունեություն ծավալելուն: Արդյունքները գոհացուցիչ են. նախ, քննությունների նման տարբերակով անցկացումը խթան հանդիսացավ ուսանողների կողմից իրենց գիտելիքները գործնական ոլորտում կիրառելու հմտությունների ձևավորման, դատական պրակտիկայի ավելի խոր ուսումնասիրման համար: Միաժամանակ, դասախոսական կազմի մոտ մեծացավ պարտավորվածությունը՝ տարվա ընթացքում, ուսանողների հետ անցկացվող սեմինար, գործնական պարապմունքների ժամանակ, ավելի հաճախ անդրադառնալ պրակտիկ նյութերի քննարկմանը, խնդիրների լուծմանը, դրանց լուծման մեթոդոլոգիայի մշակմանը, խնդրագրքերի ստեղծմանը:

Բնականաբար, կրթության որակի ավաճումն անհրաժեշտ է տեսանկյունից կարևոր նշանակություն ունի **Ֆակուլտետում կադրերի պատրաստման հարցը**: Այն առավել կարևորվեց վերջին տարիների ընթացքում. մեր լավագույն երիտասարդ դասախոսներից շատերին պրակտիկա աշխատանքի հրավիրելու համատեքստում: Իրավագիտության ֆակուլտետի բոլոր ամբիոնների կողմից կարևորվում է պրոֆեսորադասախոսական կազմի համալրմանն ուղղված գործունեությունը, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Ֆակուլտետն ունի 42 ասպիրանտ և 14 հայցորդ, մեր գործընկերներից մի քանիսը աշխատում են դոկտորական ատենախոսությունների վրա, ասպիրանտներից՝ հոգի (Տ. Սուջյան, Տ. Խաչիկյան, Հ. Հախվերդյան, Ա. Հովհաննիսյան, Վ. Դանիելյան) 2016-2017 ուստարում պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Ամբիոնների մեծ մասը խիստ երիտասարդացել է (օրինակ՝ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դասընթացների դասավանդման գործընթացի 90%-ը իրագործվում է երիտասարդների կողմից):

Խնդիրն առավել սուր է դրված Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի պարագայում, որտեղ, կադրերի՝ պետական ապարատում կամ միջազգային կազմակերպություններում աշխատանքի անցնելու հետևանքով, նկատվում է նոր կադրերով ամբիոնը համալրելու անհրաժեշտություն, թեև 2016-2017 ուստարում այն համալրվել է 2 դասախոսով:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրմանը մեծապես նպաստում է այն հանգամանք, որ ֆակուլտետի դասախոսների մեծամասնությունը դասավանդումը համատեղում են պրակտիկ գործունեության հետ, ինչն ուսանողներին հնարավորություն է տալիս ծանոթանալ պրակտիկայում ծագող խնդիրներին, հասկանալ դրանց գործնականում լուծման տարբերակները: Դրան նպաստում է նաև մեր դասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությունը ՀՀ-ում կատարվող օրենսդրական բարեփոխումների գործընթացներին՝ մասնակցությունը Քաղաքացիական դատավարության, Քրեական օրենսգրքի, Քրեական դատավարության, Քրեակատարողական, Դատական օրենսգրքերի աշխատանքային խմբերում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի լրամշակման հանձնաժողովի համակարգման աշխատանքներում: Այսօր կարելի է

վատահաբար փաստել, որ ՀՀ-ում որևէ օրինաստեղծ գործընթաց չի իրականացվում առանց մեր ծանրակշիռ մասնակցությամբ:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստման, իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրման գործընթացում կարևորվող քայլերի առումով չենք կարող չանդրադառնալ **պրակտիկայի** կազմակերպման հիմնախնդրին, քանի որ հենց պրակտիկայի ընթացքում է դրսևորվում ուսումնական հաստատությունում ստացված գիտելիքների գործնականում կիրառելու հմտությունը, ձևավորվում ապագա մասնագետի ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու կարողությունը:

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում ուսանողների համար ներկայումս նախատեսված է 6 շաբաթ տևողությամբ պրակտիկա, իսկ մագիստրատուրայում՝ նախկինում սահմանված 8 շաբաթ տևողությամբ պրակտիկայի փոխարեն՝ դրա տևողությունը երկարացվել է մինչև 12 շաբաթ: Սակայն, դեռևս խնդրահարույց է դրա՝ բովանդակային առումով արդյունավետության ապահովման հարցը: Ցավոք դեռևս ցանկալի արդյունքի չենք հասել (**խոսել կաամավոր պրակտիկանտների մասին**):

Պրակտիկայի անցկացման առումով, այս պահին, կոնկրետ պայմանավորվածություն ունենք «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրի ուսանողների համար. ՀՀ Պրոբացիայի ծառայությունը ոչ միայն աշխատանքի է վերցրել մեր շրջանավարտներից 3-ին (շատերին աշխատանքի վերցնելու ցանկություն կա, սակայն պրոբացիոն ծառայության աշխատակիցների հաստիքացուցակին համապատասխան՝ հավակնորդից պահանջվում է մասնագիտական ստաժի առկայություն, որը շրջանավարտները բնականաբար չունեն), այլև իր նախաձեռնությամբ դիմել է՝ Կրիմինալոգիա ծրագրի ուսանողներին որպես կամավոր ներգրավելու, իր կառույցում նրանց պրակտիկան կազմակերպելու խնդրանքով: Սա, ըստ էության, լիովին համապատասխանում է իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրման՝ մեր կողմից առաջ քաշված խնդիրների լուծմանը:

Որպես ուսանողների պրակտիկայի անցկացման, իրավախորհրդատվական փորձի ձեռք բերման արդյունավետ տարբերակ, արդեն մի քանի տարի է, օգտագործվում են **ԵՊՀ իրավաբանական կլինիկայի** հնարավորությունները, որը

ինչպես նշել ենք նախորդ տարվա հաշվետվության մեջ, եղել և մնում է մեր առաջնահերթություններից մեկը: Մասնավորապես, 2016-2017 թթ.-ին իրավաբանական կլինիկային կամավորության սկզբունքով կցված են եղել 31 ուսանողներ՝ 15-ը՝ քրեաիրավական, 16-ը՝ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ, ովքեր իրավաբանական օգնություն են տրամադրել 115 անձի: 2016-2017 ուստարում Իրավաբանական կլինիկայի կողմից օգնություն ստացած անձանց քանակը աճել է 15%-ով: Տարբեր պետական և մասնավոր կառույցներից, մասնավորապես ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից, Մարդու իրավունքների պաշտպանի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակից շահառուները ուղղորդվում են Իրավաբանական կլինիկա, հետևաբար բոլոր հիմքերը կան մտածելու, որ 2016-2017 ուս.տարում շահառուների քանակի գրանցված աճի միտումը կայուն կլինի:

Միաժամանակ, ընդլայնվել են այն ոլորտները, որոնցում նման աջակցություն է տրամադրվում՝ ներառելով քաղաքացիական, քրեական, աշխատանքային, բանկային, մտավոր սեփականության, վարկային, սնանկության, ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ հարցեր: Ուսանողների կողմից նախապատրաստվել է ՄԻԵԴ դիմելու խնդրանք, Մարդու իրավունքների պաշտպանին ուղարկվել «Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. ՀՀ օրենքի ենթադրյալ հակասահմանադրական նորմի սահմանադրականությունը ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկելու վերաբերյալ միջնորդություն, ինչպես նաև իրականացվել է դատական ներկայացուցչություն, ինչպես նաև հանրային շահերի պաշտպանության գործում (U-Com):

Առաջիկայում նախատեսվում է այս ոլորտները ընդլայնել՝ «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ կնքված հուշագրի հիման վրա նախատեսվում է կլինիկայում ներառել «Առողջապահական իրավունք» դասընթացը, հաճախորդներին իրավաբանական խորհրդատվություն տրամադրել առողջապահական իրավունքին վերաբերող հիմնախնդիրներով:

Գործունեության զարգացման առանցքային ուղղություններից է փախստականների իրավունքների ոլորտում կլինիկական կրթության և աջակցության ապահովումը: Այս ոլորտում իր աջակցությունն ապահովելու

ցանկությունն է հայտնել Կոննեկտիկուտի համալսարանը, և ներկայումս քննարկվում են ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Իրավաբանական կլինիկայի և Կոննեկտիկուտի համալսարանի՝ իրավաբանական կլինիկայի գործունեության ոլորտում համագործակցության հնարավոր տարբերակները: Փաստացի, առաջադրված խնդրին է ուղղված նաև Հայկական Կարմիր Խաչի ընկերության հետ տարվող քննարկումները՝ միտված ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Իրավաբանական կլինիկայում «Միջազգային մարդասիրական իրավունք» ուղղության զարգացմանը:

ՄԱԿ-ի Մանկակական հիմնադրամի հետ քննարկվում է նաև «Անչափահասների իրավունք» կլինիկական ուղղությունը ստեղծելու հարցում աջակցություն ստանալու հնարավորությունը: Նախկինում նման ցանկություն ևս կար, սակայն այս տարի այն կարծես թե իրականացման տեսանկյունից ավելի իրատեսական է դարձել:

Նշված ծրագրերի հաջողության պարագայում՝ հնարավոր կլինի Իրավաբանական կլինիկայում ապահովել ավելի մեծ թվով ուսանողների ներգրավվածությունը և նրանց պրակտիկ հմտությունների ձևավորումը: Մեր հեռահասար նպատակն է բոլոր ուսանողների ներգրավումը այդ գործընթացին, սակայն դրա համար անհրաժեշտ է ԵՊՀ-ի աջակցությունը կլինիկայի տարածքը ընդլայնելու և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու գործում:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրմանն ոլորտում կարևոր տեղ է հատկացվում նաև կարիերայի կենտրոնին, որը 2016-2017 ուս. տարում մշակել և 2017 թ.-ի հունվարից գործարկել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտների տվյալների միասնական բազայի օնլայն հայտ՝ նպատակ ունենալով ապահովել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի նախկին շրջանավարտների կապը ֆակուլտետի հետ: Թեև ստացվել են 100-ից ավելի հայտեր, սակայն դեռևս չենք կարող փաստել, որ նախաձեռնությունը հասել է նպատակին. ձևավորվել է համագործակցություն, աջակցություն՝ ուսանողների պրակտիկայի անցկացման, աշխատանքի տեղավորման գործընթացում կամ նախատեսվել է համատեղ միջոցառումների անցկացում:

Առաջիկայում նախատեսում ենք այս ոլորտը ակտիվացնել, ստացված հայտերի հիման վրա՝ մշակել կոնկրետ ծրագրեր, որոնք թույլ կտան ապահովել իրավաբանական կրթություն –պրակտիկա սերտ կապը:

Միաժամանակ, կարիերայի կենտրոնը կապեր է հաստատել տարբեր պետական մարմինների հետ՝ դատարաններ, նախարարություններ, որի արդյունքում 2016-2017 թթ.-ին 20 շրջանավարտ աշխատանքի է անցել այդ մարմիններում:

Իրավագիտության ֆակուլտետի առաջ ծառայած հաջորդ մարտահրավերը այն ***միջազգային հարթակում կրթական և գիտական ճանաչում ունեցող գիտակրթական օջախի*** վերածելն է: 2016-2017 թթ.-ին ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ֆակուլտետի միջազգայնացմանը, ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական կազմի առավել ակտիվ ներգրավվածությանը միջազգային համագործակցությանը:

Այդ առումը կցանկանայի առանձնացնել մի ոլորտ, որը տարեցտարի զարգացման միտում է դրսևորում՝ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը միջազգային դատախաղերին, մրցույթներին:

Միջազգային դատախաղերին մեր ուսանողների մասնակցությունը կարևորվում է նրանով, որ դրանց ընթացքում նրանք ձեռք են բերում անփոխարինելի փորձ, շփման շրջանակ, միաժամանակ՝ ծանոթանում միջազգային աշխատաշուկայում իրավաբանին ներկայացվող պահանջներին:

Նախկինում ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողները մասնակցում էին հիմնականում 1 միջազգային դատախաղի՝ Ջեսսափի՝ միջազգային հանրային իրավունքի, ոլորտում մրցույթին: 2016-2017 ուս տարում, մեր ուսանողները մասնակցել են նման արդեն 5 (որից 3-ը միջազգային, 2-ը՝ միջբուհական) մրցույթների՝ միջազգային մարդասիրական իրավունքի՝ Մարտենսի, Միջազգային քրեական իրավունքի՝ Նյուրնբերգի մրցույթին (գրադեցնելով 3-րդ տեղը), Ջեսսափի մրցույթին, ԵՊՀ ի և IRZ կազմակերպության կողմից համատեղ իրականացվող Քրեական իրավունքի և դատավարության, ՀԱՀ՝ Մեդիացիոն և Արբիտրաժային մրցույթին (հաղթող): 2017-2018 թթ.-ին արդեն նախատեսվում է ընդլայնել նաև այդ շրջանակը՝ բացի վերը նշված 5 մրցույթներից, մեր ուսանողները 2 թիմով արդեն ներկայացված են Հայկական Կարմիր Խաչի կողմից ՀՀ-ում անցկացվող միջազգային

մարդասիրական իրավունքի դատախաղում, 1 թիվ գրանցված է ՄԻԵԴ-ի կողմից մարդու իրավունքների ոլորտում անցկացվող մրցույթին, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողները, որպես թիմի անդամ և ավագ, ներկայացված են Ֆրանկֆուրտի՝ միջազգային ներդրումային իրավունքի համար հայտ ներկայացրած հանրապետական թիմում: Ամենայն հավանականությամբ, դատախաղերի մասնակցության աճի այս միտումը կպահպանվի նաև ապագայում:

Պրոֆեսորադասախոսական կազմի ևս անմասն չէ ֆակուլտետի միջազգայնացման գործընթացներից, թեև այդ մասնակցությունը դեռևս մեր կողմից ցանկալի մակարդակը չի ապահովում:

Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա. Մարգարյանը 2016-2017 ուս. տարում դասախոսություններ է կարդացել Մոնպելյեի համալսարանի (Ֆրանսիա) Իրավագիտության ֆակուլտետում, զեկուցումով հանդես եկել Արտասահմանյան և միջազգային քրեական իրավունքի Մաքս Պլանկի ինստիտուտում (Գերմանիա), Քաղաքացիական դատավարության ամբիոնի անդամ Տ. Վարդազարյանը 2016 թ.-ին ավարտել ուսումը Նոթինհեմի իրավաբանական դպրոցում. առաջիկայում Քաղաքացիական դատավարության ամբիոնի 2 դասախոսներ՝ Պ. Թադևոսյանը և Լ. Պետրոսյանը մեկնելու են վերապատրաստման Ֆլետչերի համալսարան: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ՀՀ-ը ներկայացրել են տարբեր միջազգային կոնֆերանսներում և հարթակներում, այնուհանդերձ այս ոլորտում առկա են մի քանի հարցեր, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝

ա/ արտասահմանյան երկրների համալսարաններում դասախոսություններով ավելի հաճախ հանդես գալուն,

բ/ միջազգային գիտաժողովներում գիտական հետազոտության արդյունքները ներկայացնելուն,

գ/ միջազգային հետազոտական համատեղ ծրագրերին մասնակցությանը:

Արտասահմանյան երկրների համալսարաններում դասախոսություններով հանդես գալու հնարավորությունները գնալով աճում են, նկատի ունենալով ERASMUS ծրագրի, ինչպես նաև միջհամալսարանական պայմանավորվածությունների շրջանակում նման գործունեություն ծավալելու հնարավորությունը: Սրա կարևորությունն ակնհայտ է, քանի որ հնարավորություն է տալիս այլ երկրների ուսանողների ծանոթանալ մեր իրավական համակարգի

առանձին հիմնախնդիրներին, դասավանդման մոտեցումներին և նրանց մոտ առաջացնում հետաքրքրություն՝ արդեն մեր ԲՈՒՀ-ում, թեկուզև մեկ կիսամյակի շրջանակում, կրթություն ստանալու համար: Սակայն, դա ենթադրում է 2 հանգամանք՝ դասախոսի կողմից լեզվի իմացություն և մեր ֆակուլտետում օտար լեզվով դասավանդվող դասընթացների շրջանակ, որից արտերկրի ուսանողը, իր հետաքրքրության շրջանակներում ընտրություն կկատարի: Այս ոլորտում որոշակի տեղաշարժ արդեն նկատվում է՝ երիտասարդ դասախոսների մեծ մասը տիրապետում են օտար լեզուների (արդեն ֆակուլտետում լավ ավանդույթ է դառնում ուսանողների համար օտար լեզվով դասընթացներ են անցկացնում), հետևաբար մոտ ապագայում առավել իրատեսական է այս խնդրի լուծումը:

Միջազգայնացման մյուս երկու ուղղություններով՝ միջազգային գիտաժողովներում գիտական հետազոտության արդյունքները ներկայացնելու, միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցության առումով խնդիրներն ավելի շատ են, առաջիկայում անելիքները՝ նույնպես:

Կասկածի ենթակա չէ այն, որ Իրավագիտության ֆակուլտետի գիտական ճանաչման նպատակով կարևոր նշանակություն ունեն մեր դասախոսական կազմի կողմից կատարված գիտական հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները, այդ թվում օտար լեզուներով: 2016-2017 ուստարում նրանց կողմից հրատարակվել են 6 մենագրություն, 2 դասագիրք, 4 ուսումնական ձեռնարկ, 147 հոդված, ընդ որում՝ մի մասը նաև օտար լեզվով՝ ռուսերենով (9 հոդված) կամ անգլերենով (2 մենագրություն): Մեր դասախոսները մասնակցել են 37 գիտաժողովի, սակայն այստեղ քիչ է օտար լեզուներով ներկայացված զեկուցումների թիվը (10 զեկույց անգլերենով, 9 զեկույց՝ ռուսերենով):

Այս առումով, առաջիկայում նախատեսվում է պատրաստել և հրատարակել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դասախոսների՝ անգլերեն լեզվով գիտական հոդվածների 2-րդ ժողովածուն առավել ներկայացուցչական կազմով և հիմնախնդիրների շրջանակով: Նման փորձ մենք արդեն իրականացրել ենք՝ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Միաժամանակ, Սահմանադրական իրավունքի ամբիոնը նախատեսում է ՌԴ Կառավարությանն առընթեր օրենսդրության համակարգման և հանրային

կառավարման ինստիտուտի աջակցությամբ՝ վարչական իրավունքի դասագրքում ներառել ՀՀ վարչական իրավունքին վերաբերող հատված:

Ինչ վերաբերում է միջազգային հետազոտական ծրագրերի իրականացմանը, ապա այս առումով հարաբերականորեն ակտիվություն դրսևորում է Էկոլոգիական իրավունքի կենտրոնը: Եվս մեկ զարգացում լինելու է առաջիկայում՝ Իրավագիտության ֆակուլտետը ներգրավվել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի, HEARTLAND միջազգային միավորման աջակցությամբ իրականացվող տարածաշրջանային հետազոտական ծրագրում՝ **«Անչափահասների արդարադատության բարելավում և ղեռահասների՝ մարդու իրավունքների առաջխաղացումը»** թեմայով: Հետազոտական ծրագրերի առումով կցանկանայի առանձնացնել նաև Սահմանադրական իրավունքի ամբիոնի մեր դասախոսների կողմից, Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող ծրագիրը՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգման, դրանց կատարման և ՄԻԵԴ-ի որոշումների համեմատական վերլուծություն իրականացնելու վերաբերյալ:

Մեծ նշանակություն ունեն մեր արտասահմանցի գործընկերների կողմից ԵՊՀ-ում դասընթացների, ինչպես նաև նրանց հետ համատեղ քննարկումների, կլոր սեղանների անցկացումը: 2016-2017 ուստարում IRZ միջազգային կազմակերպության աջակցությամբ ՀՀ-ում ուսանողների համար «Պատիժ նշանակելու հիմնախնդիրները», «Պրոբացիայի հիմնախնդիրները» թեմայով դասախոսություններով հանդես եկան Գերմանիայի մեր գործընկերները, Էկոլոգիական իրավունքի կենտրոնում՝ շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ հիմնախնդիրների թեմայով՝ Ստոկհոլմի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, Օրիուս կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի նախագահ Յոնաս Էբբենսոնը, սահմանադրական իրավունքի ամբիոնում տեղի ունեցավ քննարկում «Արգենտինայի սահմանադրական համակարգի առանձնահատկությունները» թեմայով՝ Բուենոս Այրեսի համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ Դիեգո Դոլաբջյանի հետ, վերջերս, կլոր սեղան-քննարկում անցկացվեց մեր լեհ գործընկերների հետ: Առաջիկայում, այս ոլորտում, նախատեսում ենք ակտիվացնել գործունեությունը. արդեն կոնկրետ պայմանավորվածություններ կան Սլովենիայի

Լյուբլյանայի համալսարանի մեր գործընկերների հետ՝ քրեական իրավունքի հիմնախնդիրներով կլոր սեղանի անցկացման վերաբերյալ, լեհ մեր գործընկերների հետ՝ իրավունքի պատմության ոլորտում համատեղ կոնֆերանս անցկացնելու վերաբերյալ նչպես նաև 2018 թ.-ին ցանկություն ունենք անցկացնել միջազգային գիտաժողով՝ իրավունքի արդի հիմնախնդիրների թեմաներով:

ԵՊՀ-ի Իրավագիտության ֆակուլտետի միջազգային ճանաչման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև բրիտանական իրավաբանական խոշորագույն՝ <Allen and Overy> կազմակերպության կողմից «Աշխարհի համալսարանների համեմատական իրավունք», ծրագրին՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոսների ջանքերով ՈւԳԸ-ի ուսանողների մասնակցությամբ՝ ՀՀ իրավական ռեյտինգավորման վերաբերյալ հետազոտությունը,

Անցած տարվա հաշվետվության ժամանակ նշվեց ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի կողմից *Արցախի պետական համալսարանի* իրավաբանական ֆակուլտետին աջակցելու նախաձեռնության մասին: 2016-2017 ուս.տարում այդ նախաձեռնությունը կյանքի կոչվեց. նախ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից այցելություն կատարվեց Արցախի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, որին հաջորդեց Արցախի պետական համալսարանի երիտասարդ դասախոսների այցելությունը ԵՊՀ, նրանց հետ մեթոդաբանական վերապատրաստում անցնելու նպատակով, իսկ ավելի ուշ՝ նրանց ԵՊՀ-ի և IRZ կազմակերպության կողմից կազմակերպվող Քրեական իրավունքի և դատավարության հիմնախնդիրներով դատախազին հրավիրելը: Այդ աջակցությունը գնալով խորանում է. մեր դասախոսներից 6-ն արդեն այս տարվա սկզբին 1 շաբաթյա այցի ընթացքում դասախոսություններ են կարդացել Արցախի համալսարանում, որին հաջորդել է ԵՊՀ-ի Իրավաբանական կլինիկայի աջակցությամբ Արցախի պետական համալսարանում իրավաբանական կլինիկա ձևավորելու և կայացնելու գործընթացը: ԱրՊՀ-ին աջակցության շրջանակներում հարջորդ քայլը կլինի այս տարվա դեկտեմբերի սկզբին ֆակուլտետում ավանդաբար կազմակերպվող ասպիրանտ հայցորդների և պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գիտաժողովների Արցախի ներկայացուցիչներին մասնակցությունը – 3-ակա ասպիրանտ և 3-ական դասախոս: ԱրՊՀ իրավունքի ամբիոնը մենք դիտարկում ենք որպես մեր ֆակուլտետի

կառուցվածքային ստորաբաժանում դրանից բխող բոլոր կառուցվածքային և բովանդակային հետևություններով:

2016-2017 ուս. տարում ակտիվ գործունեություն է ծավալել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ***ուսանողական գիտական ընկերությունը***. շարունակելով իր ակտիվ գործունեությունը և տարվա արդյունքներով պահպանել է իր առաջատար դիրքերը- ԵՊՀ-ում: Իրավագիտության ֆակուլտետի կարիերայի կենտրոնի հետ համատեղ այն անցկացրել է իրավական առանձին հիմնախնդիրներին նվիրված սեմինարների շարք (8 սեմինար), հոկտեմբերի 2-5-ը՝ ՈԻԳԸ միջազգային գիտաժողով, այցելություններ ՀՀ Սահմանադրական դատարան, Ազգային ժողով, Փաստաբանների պալատ: ՈԻԳԸ-ի կարևոր ձեռքբերումներից մեկը, ինչպես արդեն նշվեց, ՀՀ իրավական ռեյտինգավորման վերաբերյալ ՈԻԳԸ անդամների կողմից իրականացված հետազոտության արդյունքների հրատարակումն է Լոնդոնում: